



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 31 » « հուլիս » 2019թ. № 378-Ղ

**ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Նշանակել ծառայողական քննություն շրջակա միջավայրի նախարարի 2019 թվականի հուլիսի 4-ի «ԱՆԻ» բաց բաժնետիրական ընկերությանը 2017 թվականի մայիսի 10-ին տրամադրված N 000083 ջրօգտագործման թույլտվության անվավեր ճանաչելու մասին» N 211-Ա հրամանը հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) շրջակա միջավայրի նախարարի գրությունը (ելից 1/18.2/11717, գրանցված 2019 թվականի հուլիսի 8-ին), ուղղված հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին, պատշաճ ժամկետում ընթացք չտալու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով.

1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,

2) Արմինե Հովհաննիսյան - Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ,

3) Կարինե Քուլջյան – Քարտուղարության ընդհանուր բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

« 31 » հուլիս 2019թ.  
 ք. Երևան